ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, Երևան 0095, Մ. Բաղրամյան պող. 19, հեռ.՝ 011513351, zaruhi.batoyan@parliament.am

---

16.07.2024

**ՀՀ ԱԺ նախագահի պարտականությունները ժամանակավոր կատարող,**

**Ազգային ժողովի նախագահի տեղակալ**

**պարոն Ռուբեն Ռուբինյանին**

Հարգելի՛ պարոն Ռուբինյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների պահանջները՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում եմ ««Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի Աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա)նախագիծը,

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքի լրացվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում եմ սահմանված կարգով օրենքի նախագիծը դնել շրջանառության մեջ:

**Հարգանքով՝** **Զարուհի Բաթոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը լրացնել նոր 10.2-րդ հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 10.2. Հայրերի օր՝ նշվում է հունիսի 17-ին:»:

***Հոդված 2.***

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

### 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածն ամրագրում է պետության պատասխանատվությունն ընտանիքի պաշտպանության դերի կարևորման հարցում: «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակների մասին» ՀՀ օրենքով սահմանված է Մայրության և գեղեցկության տոնը, որը նշվում է ապրիլի յոթին: Գործող կարգավորումները չեն սահմանում սակայն Հայրերի օրը:

Աշխարհի մի շարք երկներում Հայրերի օրը նշվում է նպատակ ունենալով մեծարելու և երախտագիտություն հայտնելու հայրերին, արժանին մատուցելու նրանց կողմից կատարած զոհաբերությունների, ունեցած ավանդի և ներդրումների համար՝ հանուն իրենց երեխաների և ընտանիքի ապագայի և բարեկեցության:

Ներկայում Հայրերի օրը ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Հնդկաստանում, Ճապոնիայում նշվում է հունիսի երրորդ կիրակի օրը: Բրազիլիայում՝ օգոստոսի երկրորդ կիրակի օրը, Ավստրալիայում՝ սեպտեմբերի առաջին կիրակի օրը, Գերմանիայում օրը տոնում են Հիսուս Քրիստոսի համբարձման օրը: Թաիլանդում Հայրերի օրը նշվում է դեկտեմբերի 5-ին, որը միահյուսված է հանգուցյալ թագավոր Բումիբոլի ծննդյան տոնակատարությանը և այլն:

Հայրերի օրն օգնում է ընդգծելու հայրության կարևորությունը երեխաների դաստիարակության և զարգացման, ընտանիքի կայացման հարցում: Ըստ գիտական հետազոտությունների՝ ներգրավված հայրերի երեխաները ամենից շատ

են շահում: Նրանք մեծանում են զարգացած ճանաչողական կարողություններով, ունենում են ավելի բարձր ինքնագնահատական, կարողանում են առանց բարդության լուծել կոնֆլիկտները և ավելի քիչ վարքագծային խնդիրներ են ունենում: Իսկ իրենց երեխաների կյանքում ակտիվ ներգրավվածություն ունեցող հայրերն ավելի գոհ են, երջանիկ և առողջ: Նրանք ավելի քիչ վնասակար սովորություններ ունեն և ավելի երկար են ապրում: Բացի այդ՝ ավելի ամուր են կապված իրենց զուգընկերներին և ընտանիքի բոլոր անդամներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքում լրացում կատարել և սահմանել Հայրերի օր:

## 2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով նախատեսվում է վերանայել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը, և հունիսի 17-ը սահմանել որպես Հայրերի օր:

## 3. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում հունիսի 17-ը ՀՀ-ում պաշտոնապես կնշվի որպես Հայրերի օր, կստեղծվեն իրավական հիմքեր հայրերի մեծարման և նրանց դերի բարձրացման ուղղությամբ միջոցառումներ և ծրագրեր մշակելու և իրականացնելու, այդ նպատակով պետական և հասարակական հատվածի համագործակցությունը խթանելու, ինչպես նաև հանրային կրթության ծրագրերը խթանելու համար:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 10.2. Հայրերի օր՝ նշվում է հունիսի 17-ին: